



43. ԾՈՒՇ ԱԽՏԵՐ, ՏԱՐՏԱՐ ԱԽՏԵՐ

Պառավըմ կիւնը, ուր էրկու լաճ: Ան մեկ լաճ՝ ճհւշն, ճարտար էր, լա ան մեկէլ՛ ծուռ: Կովըմ կեր անունց, ան ծուռ լաճ հըմեն օր կը տաներ, կը թըղմեր սար վե, կը գեր: Օրըմ տարավ, իբուլ սար վե, կով կորուսավ:

Գընաց, կովու հիտիվ կան իրը, տեսավ քըռքըռոտիկըմ կայ-նիր վար քարին, անու էսաց. - Քըռքըռոտիկ, տիւ իմ կով չը՞ս տի-սիր:

Քըռքըռոտիկ գըլոխ թափ իտու, էլմէլ խարցնից, էսաց. - Իմ կով չը՞ս տիսիր:

Էլմէլ գըլոխ թափ իտու քըռքըռոտիկ: Ան էլ հիշունց իտու, էսաց. - Քու տիրու խերն անիծիմ, տիւ ձեն չըս ըժը:

Քար մ' եզար, քարը տեպավ հիւրիշ քարիրուն, գընկզընկալեն պա՛ն ընկալվ տակ, գընաց հիրիշկից, տեսավ գիւգիւմըմ ուս-կը: Գիւգիւմ ուսկին իպը, պախից:

Օրըմ ծուռ ախսպեր ուրինց տոռ փետ կը ճըղճըղեր, կազին հանտվե տ' ընցներ, ան շուտ խասավ, կազին իտու մա գըլխուն, արավ էրկու տապակ, էթալ մա փուղուցին:

Տարտար ախսպեր իրը, տեսավ, կազին ջանտակ տարավ, էթալ ուրինց խուր վե, էսաց՝ տոռ չընգնիւք թալե՛մ:

Էրկու-իրիք օր տեղ չըթըխին, վուր կան չիկին կազին հի-տիվ, չուր ան մեկ օր իկին մա ծուռ ախսպեր, սիցին՝ կազին չըս տիսիր, էսաց. - Ինչ բոշ-քառատակ կան կը գեք, Վուըլա՛, իս սպա-նիցը, թալցը մի խուր վե:

ճարտար ախաբեր վուր կը լըսը, շուտ կը վազը, կուտուշ-քիրով սիկ քոշըն վիզ կը կըտրը, կը թալը խուր վե՝ վար կազիւ ջանտակին, վուր կազին չերեվա:

Դիւքմըթ մարթիր կը յան, կիրիշկին, ծուռ ախաբեր կըսը՝ իս իլնիմ, խանիմ, ճարտար կըսը՝ տիւ չըս կարը, իս մըտնիմ, խանիմ:

ճարտար ախաբեր կը մըտնը խուր վե, կըսը. - Զի կազին մուրուսո՞վ էր, թի՞ անմուրուս:

Կըսին. - Դու խան տիւս, մուրուսով ը:

ճարտար ախաբեր էլըմ կը խարցնը. - Զի կազին կուտուշո՞վ էր, թի՞ անկուտուչ:

Կըսին. - Կուտուշով ը, տիւ խան:

Կը խարցնը. - Զի կազին չորս ոտնա յը՞:

Կըսին. - Խա՛, տիւ խան տիւս:

Կըսը. - Զի կազին մազո՞վ ը, թի՞ անմազ:

Կըսին. - Տիւ խան, մազով ը:

ճարտար ախաբեր մուրթով էծ կը խանը, կը թըլը տիւս: Դիւք-մըթ մարթիր կը տեսնան, օր ծուռ ախաբեր գուրինք կը խապը, խորոտըմ կը տըփին, կը թըղնին, կերթան:

Փելըմ մընաց, մեր հա ընչ խաց կը թըխեր, գըլիս կը քուրեր, կըսեր. «Ա՞ն, գըլիսս կը քուրվը»:

Ա.ն մեկ օր ճարտար ախաբեր տուն չեր, էլավ, պըղինծըմ ճիւր իսու վար թորվան, տաքցուց:

Մոր էսաց. - Մարե՛, պի՛, քու գըլիս լվամ:

Սեր էսաց. - Իմ գըլիս չըքուրվը, իս գըլիս չըմ լվա:

Սեր տես-տես փախավ, էլավ, ըզմեր բըռնից, անու գըլիս լվաց, չէ՞ ճիւր շատ տաք էր, մեր հանդամ հինը մեռավ:

Դիրիկուն ճարտար ախաբեր, իրը տուն, տեսավ մեր հանտե պառկեր էր, էսաց՝ նա վըրե՞», պըզտիկ ախաբեր էսաց. «Դըմն օր գըլիսս կը քուրվեր, իս էլ անու գըլիս լվացը, գի խըլուսմընն ոը-հաք պառկիրը»:

Երկուս կըռպան, լա ինչ օգուտ, ճիւչ ախաբեր նալաջացավ, ուր մեր տարավ, խուրից:

Օրըմ մընաց, մեկէլ օր ծուռ ախաբեր էլավ տանիս, կընիկըմ ան կընարեն կը գա, էսաց. - Դա՞յ, քաքիմ վար քու խոր, տիւ հի՞փ ժըրար, կը գաս:

Լարից հիտիվ կընկան, կընիկն էլ էսաց. - Իս քու մեր չիմ:
էսաց. - Ատա՛փսոզ, տիւ իմ մեր չի՞ս, հերեկն եր՝ թի թաղի-
ցինք, հի՞փ էլար, իկիր:

Լարից հիտիվ կընգան չուր մա խիրկիմ, բըռնից, ըսպանից,
լարան կապից ոտ, քեշից, կը բերեր, օր տաներ գերեզմընքտիր
թաղեր:

Ա.Ա կընար, ան կընար սիցին՝ ջանըմ, ան ի՞նչ կանիս, էսաց.
- Ախապերքիր, ի՞նչ իմ արիր, իմ մեր հերեկ տարանք, խուրիցինք,
հասօր էլըմ տը տանիմ, թաղիմ:

Ա.Ա մեռիլ ծեռնեն առին, խըլիցին, ըզծուռ ախապեր խորոտըմ
տըփիցին, գեղեն խանիցին տիւս:

Ա.Ա ծուռ ախապեր առից ուր ճարտար ախապեր, գացին քա-
ղաքըմ, փելըմ մընաց հանտե, քաղըմ հարուստ մարթըմ ան ծուռ
ախապոր էսաց. - Չը՞ս իգա՝ իմ կազիր էրեծա:

Էսաց. - Վըրե՝ չըմ իգա, կը գամ:

Ա.Ա էլավ ան զանգին մարթու կազարած, ճիւչ ախապեր
իրուռ, գընաց ուր տուն:

Ծուռ ախապեր փելըմ կազիր տարավ էրեծաց, տեսավ, օր
անունք ուրինց պուչիր կըտըցով կը քուրին:

Էսաց. - Ծիվար կազիրու վերա լիկ ոչիլ ը:

Պըղինձ իտը վար անգըթին, եռցըցուց, ըզկազիրու գըլուխ
մեկ-մեկ իտու հինք, էսան:

Եվարին կազիրու տեր իրը, էսաց. - Նա վըրե՝ նա կազիր թա-
վալած ին:

Էսաց. - Տայիմ գուրինք կը քուրին: Իս էլ զանունք լվացը, ալ
փըշուր գուրինք չըն քուրիր:

Ա.Ա էլ գընաց տուն, ուր միտ վե կըսեր. «Չէ՝ տիւ տը գան
տուն, իս քու պաշխուն տը տամ քիւ ծեռ»:

Ծուռ ախապեր գըտեր, ուր ինք էրթեր տուն, ըզինք տը տը-
փեն, ան էլ գընաց կազիրու տիրոչ մալ հըմեն առից, գընաց ուր
տուն:

Ծուռ ախապեր, ճարտար ախապեր էլան խընտրաց գեղեն փա-
խան, գացին: Ծատ գացին, թիչ գացին, խասան տեղըմ: Պըրուտ
աման էր շինիր, ծուռ ախապեր էլավ աման գընող:

Պըրուտ էսաց. - ճհկչիր՝ երկու կուռուշկան²⁴, պըզտկըտիր՝ վաբսուն փարական²⁵, շատ պըզտկըտիր՝ տաս փարական²⁶:

Ծուռ ախպեր էսաց. - Չէ, վուըլա՛, զըմեն տաս փարական:

Կըօվան, պըրուտ, ծուռ ախպեր խասան հիրար, քանը պըրուտ ամանքտիրուց կը փախեր, կը գանցաներ, ծուռ ախպեր կէրթեր մա ամանքտիրուն, չուր պըրուտը ամանքտիր զըմեն սըղկից: Ըզպըրուտ թըղին ատե, ինք, ուր ախպեր էլան, փախան, գացին:

Գացին, տեսան վար ճամխին մարթըմ ջախցը քար կը կըտրեր:

Ծուռ ախպեր էսաց. - Աւտ ջախցը քար իմն ը:

Կըօվան, ըգատ մարթ կուշտըմ տըփըցին, խընտրաց ծուռ ախպեր առից ջախցը քար, գացին:

Գացին, ճընարի՛մ ծառը տակ նըստան, ծուռ ախպեր էսաց. - Մուրեն ը, իլնինք ծառ վե, քընինք:

Անունք էլան ծառ վե, ջախցը քարն էլ խանիցին ծառ վե: Տեսան քարվա՛մ իրը, ատ ծառը տակ երալ:

Գազամ գիշիր ընցավ, ծուռ էսաց. - Զի շեռըմ կը գա, ի՞նչըխ անիմ:

ճարտարն էսաց. - Ախպե՛ր, մը՛ շըռը, նա կանտար մարթ տը սիմ՝ նա վըրե՛ նարունք էլած ծառ վե:

Էսաց. - Վուըլա՛, պընենավե ծի շեռըմ կը գա, սին, չըսին, իս տը շըռիմ:

Ըըոից, տաստըմ սիցին անձրով կը գա, տաստըմ սիցին՝ չէ, երկինք պարզ ը:

Դասկւցըմ վերա առից, դասկւցըմ վերա չառից, ախըր ինչըխ էլներ խախանտան:

Պոմ էլ մընաց, էսաց. - Ախպե՛ր, ծի քաքըմ կը գա:

Էսաց. - Ախպե՛ր, հիվը կանիմ, ախըր ջորով անունք սախան, փըշու՛մ գախ քի պըռնը:

Էսաց. - Չէ, թրիստոնս, տը իլնիմ, քաքիմ ջախցը քարը ծակ վե:

²⁴ 16 կոպեկ (Ծ.Բ.):

²⁵ 12 կոպեկ (Ծ.Բ.):

²⁶ 2 կոպեկ (Ծ. Բ.):

Ելավ, քաքից ջախցը քարը ծակ վե: Թը՛փ, թը՛փ, ընկավ
ծառ տակ:

Քարվընը մարթիր սիցին. - Նա ծառ վե պա՛մ կա, նիաթ:
Ավրիցին փախսիլու:

Ծուռ ախապեր էլավ, ջախցը քար ծառեն իթըլ, ինչ իթըլ, ծուռ
ախապեր բանցըր էր, շըխկշըխկուց ընկավ ծառ վե, քարվընը խալկ
թըղին, փախան, ծուռ ախապեր հետը ծառից իջան տակ, խաշտ-
րանցան վար անունց մալիրուն, մալիր առին, իկին տուն:

Անունք խասան ուրինց մըրազին, տիւ էլ խասնեք ձի մը-
րազին:

